	Փոխարկային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 08.02.1	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ2

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....2

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐՔԱՆԿԱՅԻՆ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ3

ԳԼՈՒԽ 4. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ, ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ4

	Փոխարկային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 08.02.1	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգը սահմանում է «Յունիբանկ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) փոխարկային գործառնությունների իրականացման պայմանները և կարգը, այդ գործառնությունների մասնակիցների պարտականությունները և պատասխանատվությունները:

1.2 Փոխարկային գործառնությունների իրականացման նպատակը՝ Բանկին, բնականոն գործունեության համար անհրաժեշտ արժույթները հայթայթելն է, փոխարկային գործունեության դրական ֆինանսական արդյունքներ ապահովելն է:

1.3 Բանկի փոխարկային գործունեությունն իրականացվում է միասնական արժույթային քաղաքականության շրջանակներում, ելնելով ֆինանսական շուկայում ձևավորված առաջարկից, պահանջարկից, առկա միտումներից, և կանխատեսվող զարգացումներից, Բանկի արժույթային ռիսկերի կառավարման անհրաժեշտությունից: Միասնական արժույթային քաղաքականությունը Բանկում իրականացվում է ինչպես միջբանկային ու բորսայական (ուղղակի միջբանկային, օտարերկրյա թղթակից բանկերում և այլն), այնպես էլ ներբանկային գործառնությունների միջոցով:

1.4 Այդ քաղաքականության իրականացնող և արդյունավետության համար պատասխանատու օղակը Գանձապետարանն է՝ Գանձապետը և Ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտը (այսուհետև՝ Դեպարտամենտ):


1.5 Փոխարկային գործունեության ֆինանսական արդյունքները ձևավորվում են իրականացվող գործարքների փոխարժեքների և տվյալ օրվա ՀՀ կենտրոնական բանկի սահմանած միջին փոխարժեքների համեմատության արդյունքում, ինչը ձևակերպվում է հաշվապահորեն՝ համաձայն Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1 Յուրաքանչյուր օր մինչև ժ. 09:30 Գանձապետի կամ Դեպարտամենտի կողմից, փոխարկային գործառնություններ իրականացնելու նպատակով սահմանվում են տվյալ օրվա համար կանխիկ և անկանխիկ արտարժույթների առք ու վաճառքի ֆիքսված փոխարժեքները, որոնք դեպարտամենտի տնօրենի կողմից ստուգանշվելուց հետո ստորագրվում են Գանձապետի կողմից և անմիջապես ուղարկվում են Բանկի մասնաճյուղերին գործող էլեկտրոնային կապի միջոցով: Փոխարժեքները սահմանվում են առաջնորդվելով տվյալ բանկային օրվան նախորդող ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված միջին փոխարժեքով, շուկայական տեղական և միջազգային փոխարժեքներով, ինչպես նաև հաշվի առնելով Բանկի տվյալ օրվա խնդիրները (արտարժույթի դիրք, արտարժույթով նախատեսվող գործարքներ և այլն), և համարակալվում են տարեսկզբից մինչև ընթացիկ տարվա վերջին աշխատանքային օրը ներառյալ: Տվյալ օրվա ընթացքում փոխարժեքների յուրաքանչյուր փոփոխություն նույն ընթացակարգով հաստատվում և անմիջապես ուղարկվում է մասնաճյուղերին:

2.2 Գործառնական օրվա ընթացքում, Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից Վարչության նախագահին կամ նրա տեղակալին տվյալ պահին շուկայում տիրող իրավիճակի մասին բանավոր տեղեկացումից հետո, կամ Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի իրավասությունների շրջանակներում, ինքնուրույն, առանց ղեկավարությանը տեղյակ պահելու, կարող են տվյալ օրվա ֆիքսված փոխարժեքներից շեղումով գործարքներ իրականացվել, ինչպես հաճախորդների հետ այնպես էլ միջբանկային և բորսայական շուկաներում, ելնելով տվյալ պահին Բանկի խնդիրներից, արտարժույթային դիրքից և շուկայի իրավիճակից:

2.3 Առանձին հաճախորդների հետ փոխարկային գործառնությունները կարող են կատարվել պայմանագրային հիմունքներով՝ արտոնյալ պայմաններով, եթե տվյալ հաճախորդի հետ այլ

	Փոխարկային գործառնությունների իրականացման կարգ	Կողմ՝ 08.02.1	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ

գործառնությունների արդյունքում ստացվող Բանկի եկամուտը զգալիորեն կգերազանցի հնարավոր կորուստները, տրամադրված արտոնության հետևանքով:

2.4 Կարող են սահմանվել նաև կրոս-փոխարժեքներ:

2.5 Բանկում ներբանկային անկանխիկ և կանխիկ փոխարկային գործառնություններն իրականացվում են հաճախորդի պատվերով:

2.6 Անկանխիկ գործարքը համարվում է կատարված, եթե Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ստուգանշվել և Բանկի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրվել է հաճախորդի արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիրը:

2.7 Մասնաճյուղերում՝ սահմանված փոխարժեքներով գործարքի դեպքում, գործարքը համարվում է կատարված մասնաճյուղի կառավարչի կողմից ստորագրելու դեպքում: Սահմանված փոխարժեքների շեղման դեպքում՝ Գանձապետի, Դեպարտամենտի տնօրենի կամ դեպարտամենտի այլ աշխատակցի (իրավասությունների սահմաններում) հետ բանավոր համաձայնեցնելուց հետո մասնաճյուղի կողմից էլեկտրոնային կապի միջոցով Դեպարտամենտին ուղարկվում է համապատասխան թույլտվություն փոխարժեքի փոփոխման վերաբերյալ, որից հետո Գանձապետի կամ դեպարտամենտի կողմից մասնաճյուղին էլեկտրոնային կապի միջոցով տրվում է գրավոր թույլտվություն:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐՔԱՆԿԱՅԻՆ ԱՆԿԱՆԽԻԿ ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Անկանխիկ փոխարկային գործառնություններն իրականացվում են Դեպարտամենտի կողմից սահմանված փոխարժեքներով:


3.2 Մի անկանխիկ արժույթը մեկ այլ անկանխիկ արժույթով փոխարկման դեպքում, եթե շրջանցվում է ՀՀ դրամը, գործարքն իրականացնելու համար հիմք է ընդունվում Դեպարտամենտի տնօրենի կողմից առաջարկված կրոս-փոխարժեքը:

3.3 Հաճախորդի (իրավաբանական անձ, ֆիզիկական անձ) կողմից Բանկ է ներկայացվում հայտ, որը կարող է լինել բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային տեսքի: Գրավոր հայտը պետք է վավերացված լինի համապատասխան անձանց ստորագրություններով և կնիքով՝ իրավաբանական անձանց դեպքում, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ միայն ստորագրությամբ:

3.4 Հաճախորդի ներկայացված գրավոր հայտը սպասարկումն իրականացնող Բանկի աշխատակցի կողմից ընդունվում է կատարման միայն հաճախորդի հաշվին միջոցների առկայության դեպքում:

3.5 Հաճախորդից գրավոր հայտը ստանալու պահից, սպասարկումն իրականացնող Բանկի աշխատակիցն անմիջապես հայտը ներկայացնում է ստորագրման Բանկի համապատասխան պաշտոնատար անձին, սահմանված կարգով՝ ըստ գումարային մեծության: Փոխարժեքները համաձայնեցվում և սահմանվում են 2-րդ գլխում սահմանված սկզբունքով: Այնուհետև կազմվում է պայմանագիր, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ, որոնցից մեկը ստուգանշվում է Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից և ներկայացվում է ստորագրման և կնքման Բանկի համապատասխան պաշտոնատար անձանց: Պայմանագրերը ստորագրվում և կնքվում են նաև հաճախորդի կողմից:

3.6 Բանկի կողմից առանձին հաճախորդների և առանձին գործարքների համար կարող են սահմանվել հատուկ փոխարժեքներ՝ Գանձապետի կամ դեպարտամենտի տնօրենի կողմից ինքնուրույն՝ վերջինիս իրավասությունների շրջանակներում:

	Փոխարկային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 08.02.1	Խմբագրություն՝ 6.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 17.05.2018թ. որոշմամբ	

սահմանափակ

ԳԼՈՒԽ 4. ՄԻՋՔԱՆԿԱՅԻՆ, ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Միջբանկային փոխարկային գործառնությունները կատարվում են Բանկի և այլ բանկերի միջև կնքված պայմանագրերի, հեռախոսով կամ էլեկտրոնային կապի միջոցով ֆիքսված գործարքների հիման վրա:

4.2 ՀՀ տարածքում գործող բանկերի հետ գործարքը հեռախոսով ֆիքսելուց հետո, կնքվում է արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիր: Այնուհետև դեպարտամենտի կողմից Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո, վերջիններիս կողմից իրականացվում են միջոցների փոխանցումները ինչպես նաև համապատասխան ձևակերպումները:

4.3 Օտարերկրյա (այդ թվում՝ թղթակից) բանկերի հետ գործարքը հեռախոսով կամ REUTER համակարգով ֆիքսելուց հետո, Դեպարտամենտի համապատասխան աշխատակցի կողմից կազմվում է թիքեթ, այնուհետև Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ստուգանշվելուց հետո, ստորագրվում և կնքվում է: Թիքեթը ներկայացվում է Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին վերջիններիս կողմից էլեկտրոնային կապի միջոցով (SWIFT, FAX և այլն) սահմանված կարգով գործարքների կատարման հաստատումները ուղարկելու, միջոցների փոխանցումներու, ինչպես նաև համապատասխան ձևակերպումները իրականացնելու նպատակով:

4.4 Միջբանկային և Բորսայական փոխարկային գործառնությունների վերաբերյալ որոշումները կայացվում է գրավոր կամ բանավոր Բանկի Վարչության, Վարչության նախագահի կամ նրա տեղակալի կողմից, Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի բանավոր կամ գրավոր ներկայացման հիման վրա, ինչպես նաև Գանձապետի կամ Դեպարտամենտի տնօրենի կողմից ինքնուրույն՝ վերջինիս իրավասությունների շրջանակներում: Ինքնուրույն որոշումը կարող է իրականացվել նաև ելնելով արտարժույթային դիրքի փակման անհրաժեշտությունից: Վերոհիշյալ գործարքների հետ կապված համապատասխան փաստաթղթերը ստուգանշվում են Դեպարտամենտի տնօրենի և ստորագրվում են Գանձապետի կողմից՝ վերջինիս իրավասությունների շրջանակներում: